ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. մայիսի 18-21-ը Ռուսաստանի Դաշնություն

(Սանկտ Պետերբուրգ) գործուղելու մասին

1. **Անուն, ազգանունը՝**

Զարմինե Զեյթունցյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Ռուսաստանի Դաշնություն (Սանկտ Պետերբուրգ), 2017թ. մայիսի 18-21-ը:

4. **Գործուղման նպատակը՝**

ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության խորհրդի հերթական նիստին մասնակցություն:

5. **Քննարկված թեմաները՝**

Այցի ընթացքում քննարկվեցին հետևյալ հարցերը.

- «Մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացման ռազմավարության» պլանով 2015-2017 թվականների համար նախատեսված միջոցառումների իրականացման հարցը,

- «Մինչև 2020 թվականն ընկած ժամանակահատվածում ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացման ռազմավարության» 2018-2020 թվականների համար նոր պլանում ընդգրկվելիք միջոցառումների վերաբերյալ հարցը,
- ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի ՄԱԿ-ի համակարգի մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցության զարգացման հարցը,
- ԱՊՀ անդամ պետությունների հետ զբոսաշրջության ոլորտում հետագա արդյունավետ համագործակցության զարգացման հարցը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Այցի ընթացքում տեղի ունեցան հանդիպումներ.

- ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի անդամների հետ,
- ՌԴ Մշակույթի նախարարի տեղակալ՝ Ա. Մանիլովայի հետ,
- Սանկտ Պետերբուրգի զբոսաշրջության զարգացման կոմիտեի տեղակալ՝ Ն. Գվիչիայի հետ,
- Սանկտ Պետերբուրգի զբոսաշրջության զարգացման կոմիտեի քաղաքային զբոսաշրջային տեղեկատվական բյուրոյի գործադիր տնօրեն՝ Ե.Պանկեվիչի հետ:

Նիստի շրջանակներում ելույթներ ունեցան ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի անդամները, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ Զարմինե Զեյթունցյանը՝ ներկայացնելով Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ներկա զարգացումները:

Նիստի օրակարգային հարցերից էին.

- ԱՊՀ երկրների ղեկավարների խորհրդի 2016 թվականի սեպտեմբերի 16-ի «Անկախ պետությունների համագործակցության ադապտացումը ներկայիս

իրողությանը» որոշման միջոցառումների իրականացումը և զբոսաշրջության ոլորտում ԱՊՀ անդամ պետությունների իրավապայմանագրային բազային գույքագրումը: Որոշում ընդունվեց մեկնարկել «2021-2030 թվականների ժամանակահատվածում ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության բնագավառում համագործակցության զարգացման ռազմավարության» նախագծի մշակումը՝ ստեղծել աշխատանքային խումբ:

- «Մետաքսի ճանապարհ», «Գինու ճանապարհ» և «Խոհարարություն» երթուղիների հանդեպ փոխադարձ հետաքրքրության բարձրացումը: Առաջարկվեց ԱՊՀ գործադիր կոմիտեի ինտերնետ պորտալի «Զբոսաշրջություն» բաժնում ստեղծել ոլորտի նշանակալից միջոցառումների միասնական քարտեզ և աջակցել այդ միջոցառումներին զբոսաշրջիկների փոխադարձ մասնակցությանը:
- ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի ՄԱԿ-ի համակարգի մասնագիտացված կազմակերպությունների հետ համագործակցության զարգացումը և ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի Որոշման միջոցառումների իրականացումն՝ ուղղված «2017 թվականը հայտարարել կայուն զբոսաշրջության միջազգային տարի՝ ի նպաստ զարգացումը»:

Որոշվեց հետագա ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի նիստերին հրավիրել նաև ՄԱԿ ԶՀԿ ներկայացուցչին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

- Հանդիպման արդյունքում ստորագրվեց ԱՊՀ անդամ պետությունների զբոսաշրջության Խորհրդի հերթական նիստի արձանագրությունը՝ դրանում արտացոլելով օրակարգային հարցերի վերաբերյալ ընդունված որոշումները:
- Այցի ընթացքում Սանկտ Պետերբուրգի զբոսաշրջության զարգացման կոմիտեի քաղաքային զբոսաշրջային տեղեկատվական բյուրոյի գործադիր

տնօրեն՝ Ե. Պանկեվիչի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել աջակցելու Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի աշխատակիցներին՝ 2017 թվականի ընթացքում Սանկտ Պետերբուրգում գործնականում ծանոթանալ զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների գործունեությանը, դրանց կառավարման մոդելին, զբոսավարների լիցենզավորման համակարգին:

8. Գործուղվողը՝

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ՝ Զարմինե Զեյթունցյան

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

5 հունիսի 2017թ.